



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

06.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/23

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների
գործարան» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Դ. Մինասյանի (լիազորագիր, տրված՝ 15.05.2019թ.)

Լ. Մինասյանի (լիազորագիր, տրված՝ 15.05.2019թ.)

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական

տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչ՝

Ա. Պետրոսյանի (լիազորագիր, տրված՝ 15.05.2019թ.)

քննելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարության կարիքների համար Մ-3, Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի
սահմանի կմ 83+850 հատվածի կամրջի վերանորոգման, Մ-4, Երևան - Սևան - Իջևան -
Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 103+100

հատվածի վթարված կամրջի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/23 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 07.05.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Դիմումատու) ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին մասնակցելու համար 18.04.2019թ.-ին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) հարցում է ներկայացրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Կոմիտեի 30.04.2019թ. եզրակացության համաձայն Դիմումատուն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 307,000/ երեք հարյուր յոթ հազար/ ՀՀ դրամ հարկային պարտավորություն:

Բողոքաբերը հայտնել է նաև, որ Կոմիտեի ներկայացրած տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, հետևյալ պատճառաբանությամբ՝

1. Դիմումատուն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել: Ավելին, Դիմումատուն 18.04.2019թ. դրությամբ վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների մասով ունեցել է 6,625,899 /վեց միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր ինսունինը/ ՀՀ դրամ սահմանված չափից ավել վճարած գումարներ, ինչպես նաև 1,365,801 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր մեկ/ ՀՀ դրամ դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով (կից ներկայացվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. Ապրիլի 11-ի թիվ 245 - Ա հրամանի հիման վրա տրված հարկ վճարողի՝ «Կամրջային երկաթետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի անձնական հաշվի քարտի քաղվածքի օրինակը, որտեղ նշված տեղեկատվությունը, Հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից):

2. Այնուամենայնիվ, հարկ են համարում նշել նաև, որ վերը նշված քաղվածքում արտացոլված չեն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված «դրոշմանիշային վճարները» և դա պատահական չէ, քանի որ դրոշմանիշային վճարները չեն հանդիսանում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ, ահա թե ինչու՝

- «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը: Հետևաբար, հարց է առաջանում Արդյո՞ք դրոշմանիշային վճարները հանդիսանում են հարկ, տուրք կամ օրենքով սահմանված պետական և համայնքների բյուջեներ վճարվող օրենքով սահմանված այլ վճարներ և հետևաբար վերահսկվող եկամուտներ:

• Այն չի հանդիսանում հարկ կամ տուրք, քանի որ դրանց բնորոշումները արդեն իսկ տրված են օրենքով: Մնում է հասկանալ, թե ի՞նչ է նշանակում ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող օրենքով սահմանված վճարը: Բարեբախտաբար Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վճարը սահմանված է որպես օրենսգրքով նախատեսված պետական կամ տեղական վճար, իսկ 7-րդ հոդվածը սահմանել է վճարի տեսակները, որոնք են՝

1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. պետական տուրքը,

բ. բնօգտագործման վճարը,

գ. սոցիալական վճարը,

դ. ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

զ. կենսաթոշակային վճարը.

2) տեղական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. տեղական տուրքը,

բ. տեղական վճարը:

Ակնհայտ է, որ դրոշմանիշային վճարները վերը նշված շարքին չեն դասվում և օրենսգրքով նախատեսված չեն:

• Ավելին, եթե նույնիսկ փորձ արվի կատարել դրոշմանիշային վճարների այլ մեկնաբանություն, ապա «ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող օրենքով սահմանված վճարը» հասկացության տառացի («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից) մեկնաբանությունից հասկանում ենք, որ վճարները

պետք է գանձվեն պետական կամ համայնքային բյուջե: Սակայն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 16-րդ, հոդվածների համաձայն այդ գումարները պետական բյուջե չեն փոխանցվում, այլ

- ✓ օրենքով նախատեսված հատուցման գումարները վճարում է օրենքի համաձայն ստեղծված հատուցման Հիմնադրամը,

- ✓ ում հատուկ հաշվին ֆինանսների ոլորտում Կառավարության լիազորված մարմնի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում է դրոշմանիշային վճարի ամբողջ գումարը,

- ✓ ավելին, համաձայն նույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, Հիմնադրամի միջոցները կարող են ձևավորվել օրենքով սահմանված կարգով հավաքված դրոշմանիշային վճարների գումարներից,

- ✓ այս փաստը հաստատող մեկ այլ հիմնավոր ապացույց է այն, որ պարտադիր դրոշմանիշային վճարները պետք է փոխանցվեն Ֆինանսների նախարարության կողմից Կենտրոնական Գանձապետարանում բացված առանձին 900005001186 «Դրոշմանիշային վճարներ» հաշվեհամարին (<https://www.1000plus.am/hy/faq>), այլ ոչ թե մեկ միասնական հաշվով ինչպես սահմանված է ՀՀ Հարկային օրենսգրքով, ինչպես այլ պետական բյուջե փոխանցվող վճարները (բնօգտագործման վճարներ, սոցիալական վճարներ, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ և այլն):

- ✓ դրոշմանիշային վճարները չեն արտացոլվում հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում, որն ուղղակիորեն նշում է, որ հանդիսանում է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները ամփոփող տեղեկատվություն:

Նշված օրենքի համապարփակ, խորքային ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ դրոշմանիշային վճարները չեն հանդիսանում պետական բյուջե գանձվող հիմնական միջոց, այլ պարզապես պետական բյուջեն հանդիսանում է միջնորդ գործոն Կենտրոնական բանկում Հիմնադրամի համար բացված հատուկ հաշվում այդ դրամական միջոցների հաշվառումը կազմակերպելու համար:

Հետևաբար, օրենքով սահմանված վճարները վերահսկվող եկամուտներ համարվելու համար պետք է անպայմանորեն փոխանցվեն ՀՀ պետական և համայնքների բյուջեներ՝ ընդ որում այդ դրույթը չպետք է կրի զուտ ձևական բնույթ, այլապես ցանկացած

պարտավորություն կարելի կլինի որակել որպես «օրենքով սահմանված պարտադիր վճարներ»:

• Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները մենք կարող ենք «ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող օրենքով սահմանված վճարը» մեկնաբանել նաև տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքների կիրառմամբ: Հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ կողմածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթները՝ Հարկային ծառայության կազմակերպման սկզբունքներն են ՀՀ Սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնությունը, ինչպես նաև հարկային համակարգի պարզությունը, հստակությունը և համախմբվածությունը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը հարկ վճարողների և հարկային մարմնի համար պետք է լինեն պարզ, հստակ և իրենց մեջ չպարունակեն հակասություններ ու անորոշություններ: Հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը պետք է լինեն հնարավորին չափ համախմբված, և պետք է խուսափել առանձին իրավական ակտերով հարկային հարաբերությունների կարգավորումից:

Սակայն, խախտելով վերը նշված սկզբունքները, «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանվել է դրոշմանիշային վճարների հասկացությունը, դրանց գանձման և վերահսկման գործընթացները՝ փորձ անելով առանձին իրավական ակտով կարգավորել հարկային հարաբերությունները, իսկ հարկային օրենսգրքում և «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում առհասարակ բացակայում է դրոշմանիշային վճարների մասին նշումը՝ հարկ վճարողների համար առաջացնելով անորոշություններ և հակասություններ:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Հետևաբար, ելնելով այս դրույթից, հարց է

առաջանում՝ ո՞րն է հանդիսանում վերահսկվող եկամուտներ և ինչ տեղեկատվություն պետք է պահանջեր և ստանար Նախարարությունը:

- Հակասություններից և անորոշություններից խուսափելու նպատակով հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում պետք է հստակ թվարկված լինեն վերահսկվող եկամուտների ցանկը: Մինչդեռ այն բացակայում է և՛ ՀՀ վարչապետի 16 հոկտեմբերի 2018թ. թիվ 1375-Լ «Հարկային ծառայության գործառույթները հաստատելու մասին» որոշման մեջ, և՛ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին» 2018թ. հունիսի 21-ի օրենքում, և՛ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին» 2016թ. դեկտեմբերի 16-ի օրենքներում (այս օրենքներում կտրականապես բացակայում է դրոշմանիշային վճարներ կամ այլ վճարներ արտահայտությունը):

Նման թվարկում առկա է միայն մեկ իրավական ակտում՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին» հրամանում: Այդ հրամանով սահմանվել է, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով (այդ թվում՝ հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցների գծով) պետական բյուջեի հանդեպ պարտավորությունների տեղեկանքի օրինակելի ձևը, որտեղ վերահսկվող եկամուտներ են թվարկված միայն՝

Հարկատեսակ	Պարտավորության չափը
1	2
ԱԱՀ	
Շահութահարկ	
Եկամտային հարկ	
Ակցիզային հարկ	
Շրջանառության հարկ	
Արտոնագրային հարկ	
Բնապահպանական հարկ	
Ոչ ռեզիդենտի շահութահարկ	

Սոցիալական վճար	
Պետական տուրք	
Բնօգտագործման վճար	
Այլ հարկային եկամուտներ	
Ընդամենը	

Ակնհայտ է, որ սույն հրամանում, որը ուժի մեջ է մտել 01.01.2018թ.-ին, այսինքն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (15.12.2016թ.)՝ դրոշմանիշային վճարների մասին ոչ մի մատնանշում չի արվում և տրված է կոնկրետ հարկատեսակների և վճարների ցանկը, որոնք պետք է առկա լինեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի մեջ:

Քանի որ որևէ այլ իրավական ակտում վերահսկվող եկամուտների ցանկը սահմանված չէ, ապա այստեղ առկա է օրենքի բաց, հետևաբար կիրառելի է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, այն է՝ եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը:

Հաշվի առնելով նաև ՀՀ հարկային համակարգի կարևորագույն սկզբուններից մեկը՝ հավասարության սկզբունքը, ապա հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը պետք է հավասարապես կիրառվեն բոլոր հարկ վճարողների նկատմամբ: Հետևաբար, կիրառելով օրենքի անալոգիա կարող ենք համոզվածությամբ պնդել, որ օրենսդիրը և իրավակիրառ պետական մարմինը վերահսկվող եկամուտներ ցանկի մեջ «դրոշմանիշային վճարները» չեն ներառել և սահմանափակվել են միայն 12 հարկատեսակներով ու վճարներով: Հետևաբար ո՛չ Նախարարությունը կարող էր այդ մասով տեղեկատվություն պահանջել, ո՛չ էլ Կոմիտեն նման տեղեկատվություն տրամադրել:

4. «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի N4 արձանագրության մեջ նշված է, որ Նախարարությունը 30.04.2019թ.-ին ստացել է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը»: Հարց է առաջանում՝ արդյո՞ք Կոմիտեն իրավունք ունի եզրակացություն տրամադրելու:

• ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 44 -րդ կետի համաձայն Կոմիտեն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Նշված ձևակերպման տառացի մեկնաբանությունից ակնհայտ է, որ Կոմիտեն կարող է տրամադրել միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին տեղեկատվություն, իսկ եզրակացության տրամադրումը ենթադրում է առկա տեղեկատվության հիման վրա դատողություններ կամ հետևություններ կատարել, հանգել որոշակի կարծիքի, ամփոփել և եզրահանգումներ կատարել և այլն: Հետևաբար, Կոմիտեն այս հարցում իրավունք չունի տրամադրելու որևէ «եզրակացություն», այլ զուտ տեղեկատվություն առկա փաստական հանգամանքների վերաբերյալ, իսկ եզրահանգումներ կատարելու լիազորությունը թողնել համապատասխան հանձնաժողովին, քանի որ վերջիններս հենց գնահատական տալու համար են ձևավորվում:

• Ավելին, ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածը սահմանում է կարևորագույն որոշակիության սկզբունքը, այսինքն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Հետևաբար, եթե Կոմիտեն Նախարարությանը տրամադրած տեղեկատվության մեջ ներկայացրել է Դիմումատուի իրավունքները սահմանափակող այլ տվյալներ քան ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. Ապրիլի 11-ի թիվ 245 - Ա հրամանի հիման վրա տրված հարկ վճարողի՝ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան»

ՓԲԸ-ի անձնական հաշվի քարտի քաղվածքում է արտացոլված, ապա Կոմիտեն խախտել է նաև կարևորագույն՝ Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքը, որի արդյունքում Դիմումատուն ի վիճակի չի եղել դրսևորելու համապատասխան վարքագիծ: Փաստացի, կոմիտեն Դիմումատուին և Նախարարությանը միևնույն փաստի մասին տրամադրել է իրարից տարբերվող տեղեկատվություններ:

• Եվ վերջապես, եթե Կոմիտեն տրամադրել է «եզրակացություն», ապա եզրակացությունում պետք է արտացոլված լիներ ամբողջական և լիարժեք տեղեկատվություն, այն է՝ Դիմումատուն իր անձնական հաշվին ունի 6,625,899 /վեց միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր իննսունինը/ ՀՀ դրամ սահմանված չափից ավել վճարած գումարներ, ինչպես նաև 1,365,801 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր մեկ/ ՀՀ դրամ դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով, հետևաբար մեկ այլ վայրում՝ դրոշմանիշային վճարներով 307,000/ երեք հարյուր յոթ հազար/ ՀՀ դրամ պարտավորությունը, կարող է հեշտությամբ հաշվանցվել, չէ որ այդ նպատակով է ստեղծված միասնական հաշիվը (իհարկե վերևում մենք արդեն իսկ անդրադարձանք, այն հանգամանքին, որ դրոշմանիշային վճարները չեն հանդիսանում վերահսկվող եկամուտներ և միակն են, որ չեն վճարվում հարկային պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող պետական արտաբյուջետային միջոցների ավանդային ենթահաշիվ): Այնուամենայնիվ, Կոմիտեն չի տրամադրել ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն:

5. Եվ վերջապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի 2-րդ կետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 26-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը բացում և գնահատում է ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային

(տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը: Յուրաքանչյուր անդամ դրանց գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկներում և իր ստորագրությամբ հաստատում դրանք: Արդյո՞ք գնահատման գործընթացը միայն ձևական պայմանների համապատասխանություն է նշանակում և գործառույթների ավտոմատ իրականացում, թե՞ հանձնաժողովի անդամներից պահանջում է ավելի խորքային քննություն՝ տրամաբանության, ձևական պահանջների պահպանման բացառման, գնման հայտերի ու փաստաթղթերի բովանդակային առումով համապատասխանության պայմանների պահպանմամբ:

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ, հետևաբար այստեղ հարկ է անդրադառնալ նաև վարչական իրավունքի կարևորագույն մի սկզբունքի, որը նաև տեղավորվում է տրամաբանության սահմաններում՝ ձևական պահանջները չարաշահելու արգելքին:

Հաշվի առնելով նաև, որ Նախարարությունը իր ամենօրյա գործունեության մեջ հանդիսանում է վարչարարություն իրականացնող պետական մարմին, ապա ձևական պահանջները չարաշահելու արգելքի համաձայն Վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Դիմումատուն իր բոլոր հարկային ինչպես նաև վերահսկվող եկամուտների գծով այլ պարտավորությունները ոչ միայն կատարել է ամբողջությամբ, այլ գերակատարել է հարկային մարմնում ունենալով 6,625,899 /վեց միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր իննսունինը/ ՀՀ դրամ սահմանված չափից ավել վճարած գումարներ, ինչպես նաև 1,365,801 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսուհինգ հազար ութ հարյուր մեկ/ ՀՀ դրամ դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով սահմանված չափից ավել վճարված գումարներ: Նման

պայմաններում, եթե որևէ հարկատեսակի մասով գոյանում է պարտք, ապա Կոմիտեն ինքնաշխատ մարում է այն առկա կանխավճարից: Սակայն, քանի որ դրոշմանիշային վճարները հարկ վճարողի մեկ միասնական անձնական հաշվի մեջ չեն ներառվում, որովհետև ոչ հարկ են, ոչ տուրք, ոչ էլ այլ վճար, ապա Դիմումատուն այդ մասով առանց գիտակցության գոյացրել է ընդամենը 307,000/ երեք հարյուր յոթ հազար/ ՀՀ դրամ պարտք: Ստացվում է աբսուրդային, միմյանց հակասող իրավիճակ, երբ հաշվին առկա է 6,625,899 /վեց միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր իննսունհինը/ ՀՀ դրամ սահմանված չափից ավել վճարած գումարներ, ինչպես նաև 1,365,801 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսուհինգ հազար ութ հարյուր մեկ/ ՀՀ դրամ դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով, սակայն ձևական պահանջների պահպանման նպատակով մերժվում է Դիմումատուի հայտը: Նման վերաբերմունքը դուրս է բոլոր տրամաբանության սահմաններից: Գնման գործընթացի գնահատումը զուտ մեխանիկական գործառույթ չէ, այլ պահանջում է փաստաթղթերի համակցված և լիակատար ուսումնասիրություն, այլապես հանձնաժողովում 5-ի փոխարեն կլինեի միայն 1 անդամ կամ համակարգիչ:

6. Հարկ ենք համարում նշել նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում սկզբունքի վրա: Գործնականում առկա են բազմաթիվ դեպքեր, երբ Կոմիտեի սխալ տեղեկատվության արդյունքում առաջանում են նաև թյուրըմբռնումներ, օրինակ՝ 11.02.2019թ.-ի **ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԲԱ-ԱՄ-2019/10 որոշումն է** (http://www.tashircity.am/upload/DocFlow/Gnumner/Mo1932516024106753_GAK228.pdf), որտեղ բոլորովին նույն փաստական և իրավական հանգամանքներում, որոշում է կայացվել հոգուտ դիմումատուի:

Այսպիսով, ամփոփելով կարելի է եզրակացնել որ՝

1. Դիմումատուն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, այդ թվում որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

2. Դրոշմանիշային վճարները չեն համարվում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ:

3. Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների ցանկը տրված է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին» հրամանով:

4. Կոմիտեն եզրակացություններ տալու իրավասություն չունի, այլ կարող է և պարտավոր է տրամադրել միայն ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ և ուրիշ ոչնչի:

5. Գնահատման գործընթացը միայն ձևական պայմանների համապատասխանության պահպանում և գործառույթների ավտոմատ իրականացում չի նշանակում, և հանձնաժողովի անդամներից պահանջում է ավելի խորքային քննություն՝ տրամաբանության, ձևական պահանջների պահպանման բացառման, գնման հայտերի ու փաստաթղթերի բովանդակային առումով համապատասխանության պայմանների պահպանմամբ:

6. Որևէ իրավական ակտով սահմանված չէ Նախարարության «դրոշմանիշային վճարների» մասին տեղեկատվություն հայցելու իրավունքը և համապատասխանաբար Կոմիտեի ի թիվս այլոց այդ մասին տեղեկատվություն տրամադրելու պարտավորությունը:

7. Կոմիտեն միևնույն ժամանակահատվածում միևնույն փաստի մասին Դիմումատուին և Նախարարությանը տրամադրում է երկու իրարամերժ տեղեկատվություն, որը հակասում է և՛ հարկային օրենսդրության և՛ գնումների կազմակերպման սկզբունքներին:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթները՝

Ընկերությունը բողոքով խնդրել է.

1. Անվավեր ճանաչել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ.-ի N4 արձանագրության 1.2 ենթակետը, 2 և 3 կետերը ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար՝ հիմք ընդունելով Դիմումատուի 6,625,899 /վեց միլիոն վեց հարյուր քսանհինգ

հազար ութ հարյուր իննսունինը/ ՀՀ դրամ սահմանված չափից ավել վճարած գումարներ, ինչպես նաև 1,365,801 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր մեկ/ ՀՀ դրամ դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով սահմանված չափից ավել վճարած գումարների առկայությունը:

3. Պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ Կոմիտեից պահանջելու միայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. Ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանի հիման վրա տրված հարկ վճարողի՝ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի անձնական հաշվի քարտի քաղվածքով սահմանված տեղեկատվություն՝ առանց դրոշմանիշային վճարների:

Ինչպես նաև Ընկերության կողմից 23.05.2019թ. ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 07.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ լրացում որով հայտնել է հետևյալը.

1. Բողոքում անդրադարձել է կատարվել այն հանգամանքին թե ինչու «դրոշմանիշային վճարները» չեն հանդիսանում վերահսկվող եկամուտներ: Այնուամենայնիվ, ցանկանում ենք հավելել, որ՝

- «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված է դրոշմանիշային վճարների հասկացությունը, այն է՝ Դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

Սակայն, ինչպես արտացոլված է վերը նշված իրավակարգավորման մեջ ոչ մի տեղ ուղղակիորեն չկա հղում այն մասին, որ «դրոշմանիշային վճարները» հանդիսանում են վերահսկվող եկամուտներ: Բողոքում արդեն իսկ հանգամանալից անդրադարձ է կատարվել այն հիմնավորումներին, թե որոնք են համարվում վերահսկվող եկամուտներ, որոնք են համարվում Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող վճարները, որոնք են վճարների տեսակները: Հավելենք միայն, որ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, վճարը

Օրենսգրքով նախատեսված պետական կամ տեղական վճարն է: Իսկ ահա նույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով հարկային հարաբերությունները կարող են կարգավորվել միայն Օրենսգրքով սահմանված դեպքերում և սահմաններում: Ստացվում է, որ եթե Օրենսգրքով սահմանված չէ պետական և համայնքների բյուջեներ վճարվող վճարների տեսակները, ապա ոչ այլ օրենքներով, ոչ էլ այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով արգելվում է նոր հարկատեսակների կամ վճարների սահմանումը: Ավելին, նույնիսկ եթե ընդունենք, որ այլ օրենքով «դրոշմանիշային վճարները» կարելի է սահմանել որպես ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող վճարները, ապա այստեղ ակնհայտորեն առաջանում են հակասություններ և երկիմաստություններ, քանի որ երկու տարբեր օրենքներում տրված են միմյանցից տարբերվող և իրար հակասող կարգավորումներ, իսկ նման պայմաններում պետք է առաջնորդվել Հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով, այն է եթե հարկային հարաբերությունները կարգավորող՝ հավասար իրավական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարրնթերցումներ, ապա դրանք մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին:

• Հայտնում ենք նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝ «Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել երկու հանգամանք՝

➤ նախ, այն փաստը, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 15-ին, սակայն և՛ օրենսդիրը, և՛ իրավակիրառ մարմինը մինչև 2018թ. նոյեմբեր ամիսը «դրոշմանիշային վճարների» մասին նույնիսկ հիշատակում չեն կատարել «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային

համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում, քանի որ այն ինչպես նախկինում, այնպես էլ այժմ չի համարվում վերահսկվող եկամուտ:

➤ և երկրորդ, ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից: Փաստորեն, այս հոդվածի մեկնաբանությունից կարող ենք եզրակացնել, որ արտատպված անձնական քարտի քաղվածքն է հանդիսանում հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից, իսկ հարկային մարմնի աշխատակիցների՝ կայքում կատարված գրառումները չեն կարող համարվել օրենք կամ օրենքի փոփոխություն կամ նույնիսկ ենթաօրենսդրական ակտ: Հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասում բացառություններ սահմանված չեն Կոմիտեի աշխատակիցների՝ կայքում կատարված գրառումների համար («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով: Օրենսգրքերում փոփոխություն կամ լրացում կատարվում է օրենքով):

Այսպիսով, Հարկային օրենսգիրքը հստակ սահմանում է, որ արտատպված անձնական հաշվի քաղվածքում նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն, իսկ քաղվածքում ուղղակիորեն նշված է, որ այն հանդիսանում է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների մասով տեղեկատվություն: Հարկ ենք համարում շեշտել, որ քաղվածքում ևս, դրոշմանիշային վճարների՝ որպես վերահսկվող եկամուտների վերաբերյալ որևէ բացառություն կամ հիշատակում չկա:

2. ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Բողոքում արդեն իսկ անդրադարձ է կատարվել այն հանգամանքին, թե որոնք են համարվում վերահսկվող եկամուտներ և որ «դրոշմանիշային վճարները» այդ ցանկում ներառված չեն: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում անդրադառնալ ևս մեկ իրավական ակտի, քանի որ այն հիշատակվում է բողոքներ քննող անձի մյուս հրապարակային որոշումներում: Դա «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքն է, որի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) կետի համաձայն պետական հարկային եկամուտներ են «դրոշմանիշային վճարները»: Այնուամենայնիվ, նշված օրենքի համապատասխան հոդվածին հղում կատարելը տեղին չէ, հետևյալ պատճառաբանությամբ՝

- ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված է, որ տեղեկատվությունը հայցվում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Հետևաբար անհասկանալի է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հիշատակումը, եթե «վերահսկող եկամուտներ» հասկացության բնորոշումը տրված է Հարկային ծառայության մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում, այն է՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը: Այստեղ խոսքը գնում է ոչ թե «հարկային եկամուտների» այլ «վերահսկվող եկամուտների» մասին: Սա խիստ առանցքային է, քանի որ նշված հասկացություններում կա հսկայական տարբերություն:

- Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հիշատակումը անհրաժեշտ է զուտ այն փաստով, որ «դրոշմանիշային վճարները» այստեղ հիշատակվում են որպես «հարկային եկամուտներ»: Այստեղ հարց է առաջանում, թե արդյոք «հարկային եկամուտները» կարելի է նույնացնել հարկերի հետ, և առհասարակ ինչ է նշանակում հարկային եկամուտ:

«Հարկային եկամուտներ» հասկացությունը տրված չէ ո՛չ ՀՀ հարկային օրենսգրքով, ո՛չ «ՀՀ հարկային ծառայության մասին» օրենքով: Այն հնարավոր չէ նույնացնել հարկերի հետ, քանի որ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հարկը դա պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով ՀՀ պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար է, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում: Իսկ նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասով թվարկված են հարկի տեսակները, իսկ 2-րդ մասով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով: Այսպիսով, կարող ենք վստահությամբ պնդել, որ «Հարկային եկամուտները» չեն կարող նույնացվել հարկերի հետ:

- Հարկային եկամուտների ցանկը թվարկված է միայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում որպես պետական բյուջեի եկամուտների աղբյուրներ: Այնուամենայնիվ, այստեղ ևս առկա են հակասություններ և տարընկալումներ: Բողոքում արդեն իսկ անդրադարձ է կատարվել այն հանգամանքին, որ թեև «Հրոշմանիշային վճարները վճարվում են պետական բյուջե, սակայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում են «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով ձևավորված Հիմնադրամ, հետևաբար հրոշմանիշային վճարները չեն հանդիսանում պետական բյուջե գանձվող հիմնական միջոց, այլ պարզապես պետական բյուջեն հանդիսանում է միջնորդ գործոն Կենտրոնական բանկում Հիմնադրամի համար բացված հատուկ հաշվում այդ դրամական միջոցների հաշվառումը կազմակերպելու համար: Այսինքն, պետական բյուջեն այստեղ ըստ էության կատարում է բանկի գործառույթ:

Մեր այս դիրքորոշումը ամրապնդելու համար անհրաժեշտ է դիտարկել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը մանրամասնությամբ: Այսպես, նույն օրենքի 1.2-րդ մասի 1-ին և 9-րդ կետերի համաձայն բյուջետային եկամուտներն են օրենսդրությանը համապատասխան պետական և համայնքների բյուջեներ մուտքագրվող՝ համապատասխանաբար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնօրինվող դրամական միջոցները: Իսկ Բյուջետային ելքերն են Սահմանադրությամբ և օրենքներով պետական և համայնքների բյուջեներից պետությանը

և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների իրականացմանն ուղղվող դրամական միջոցները: Ավելին, նույն օրենքի 1.2-րդ մասի 11-րդ կետի համաձայն բյուջեն հաստատող իրավական ակտն է պետական բյուջեի մասով Ազգային ժողովի ընդունած՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքը, որը սահմանում է համապատասխան բյուջեի տվյալ տարվա մուտքերը և ելքերը, բյուջետային հատկացումների բաշխումն ըստ դրանց գլխավոր կարգադրիչների, ինչպես նաև այլ նորմատիվ դրույթներ, որոնք գործում են միայն այն ժամանակահատվածում, որի համար ընդունվել է բյուջեն: Իսկ ահա նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական բյուջեի կատարման հսկողությունն իրականացնում է կառավարությունը՝ իր սահմանած կարգով:

Այսպես, վերը նշված օրենքի համակարգային վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ պետական բյուջեի եկամուտները պետք է տնօրինվեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, իսկ ելքերը պետք է ուղղված լինեն պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների իրականացմանը, որոնց նկատմամբ հսկողությունն իրականացնում է կառավարությունը: Ավելին, բյուջեն ձևավորվում է ամեն տարի «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքի ընդունմամբ, որտեղ հստակ սահմանված են տվյալ տարվա մուտքերը և ելքերը, բյուջետային հատկացումների բաշխումն ըստ դրանց գլխավոր կարգադրիչների:

«ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում դրոշմանիշային վճարների որպես պետական բյուջեի եկամուտների կամ ելքերի վերաբերյալ որևէ հիշատակում չկա:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 16-րդ, 20-րդ, 26-րդ հոդվածների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ՝

➤ դրոշմանիշային վճարները տնօրինվում են ոչ թե պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, այլ Հիմնադրամի,

➤ դրոշմանիշային վճարները, որպես պետական բյուջեի ելքեր ուղղված են ոչ թե պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների իրականացմանը, այլ Հիմնադրամի ծախսերի բավարարմանը,

➤ դրոշմանիշային վճարների նկատմամբ հսկողությունը իրականացնում է ոչ թե Կառավարությունը, այլ Կենտրոնական բանկը,

➤ դրոշմանիշային վճարների մասով բյուջետային հատկացումների բաշխումն ըստ դրանց գլխավոր կարգադրիչների չի իրականացվել 2019 թվականին:

Այսինքն, ակնհայտ է դառնում, որ թեև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) կետի համաձայն պետական հարկային եկամուտներն են «դրոշմանիշային վճարները», սակայն հենց նույն օրենքի և այլ օրենքների տարբեր հոդվածների մեկնաբանությունից և համադրումից պարզ է դառնում, որ առկա են հակասություններ և անորոշություններ, մասնավորապես «դրոշմանիշային վճարների» պետական բյուջե մուծվելու ձևականության, «հարկային եկամուտներ» կամ «բյուջետային եկամուտներ» հասկացությունների անորոշության և երկիմաստության, «դրոշմանիշային վճարների»՝ որպես պետական բյուջեի եկամուտների աղբյուր կարգավիճակի և նույն օրենքի «բյուջետային եկամուտներ» հասկացությունների ակնհայտ հակասության միջև:

3. ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 44 -րդ կետի համաձայն Կոմիտեն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Դիմումատուն 16.05.2019թ. նիստի ընթացքում հնարավորություն ունենացավ առաջին անգամ ծանոթանալ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի N4 արձանագրության հիմք հանդիսացած Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության օրինակին, որի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ հետևությունները՝

- Ցանկանում ենք ևս մեկ անգամ արձանագրել, որ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի N4 արձանագրության մեջ նշված է, որ Նախարարությունը 30.04.2019թ.-ին ստացել է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը» և ոչ «տեղեկատվությունը»: Եթե համապատասխան հանձնաժողովը առաջնորդվել է զուտ ընթացակարգային գործառույթներով և չի ցանկացել անդրադառնալ նյութական իրավունքի ուսումնասիրությանը, ապա հարկ է նշել, որ այդ տեսանկյունից ևս առկա են օրենքի խախտումներ: Պարզվում է, որ Կոմիտեն իրականում ներկայացրել է «տեղեկատվություն»,

սակայն հանձնաժողովը խախտել է և՛ օրենքում ամրագրված ձևակերպումների և՛ Կոմիտեի ներկայացրած փաստաթղթի կարգավիճակը սահմանող հասկացության բնորոշումը՝ արձանագրության մեջ ամրագրելով որ Կոմիտեն ներկայացրել է «եզրակացություն»: Այդ երկու հասկացությունների բովանդակային տարբերությունների մասին արդեն իսկ անդրադարձ է կատարվել բողոքում:

• Պարզվում է, որ Կոմիտեն տեղեկատվություն է ներկայացրել «պարտավորությունների» վերաբերյալ, սակայն ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Կոմիտեն պարտավոր էր տեղեկատվություն տրամադրել «վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների» վերաբերյալ: Առաջին հայացքից թվում է, թե նշված հասկացություններում չկա որևէ հակասություն: Այնինչ, Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն պարտավորությունը՝ հարկ վճարողի առկա պարտքն է, իսկ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը:

Այսինքն, ելնելով նշված դրույթների մեկնաբանությունից, կարող ենք արձանագրել, որ «որոշմանիշային վճարները» հաստատապես վերահսկվող եկամուտներ չեն, բայց կարող են դիտարկվել Հարկային օրենսգրքի տեսանկյունից պարզապես պարտավորություն: Հետևաբար, «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 43-րդ կետի 3-րդ կետի պահանջը Կոմիտեից պահանջելով տեղեկատվություն «պարտավորությունների» այլ ոչ թե «վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների» վերաբերյալ: Իր հերթին Կոմիտեն ևս խախտել է նույն դրույթը՝ տրամադրելով նման տեղեկատվություն, քանի որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման

մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

- Կոմիտեի տրամադրած «Պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության» մեջ՝ աղյուսակում, նշված է «Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ», որի համաձայն Դիմումատուն ունի 307,000/ երեք հարյուր յոթ հազար/ ՀՀ դրամ պարտավորություն: Ստացվում է, որ նույնիսկ միևնույն փաստաթղթի վերնագիրն ու բովանդակությունն են հակասում միմյանց:

- Արձանագրության մեջ տեղ գտած մյուս ընթացակարգային խախտումների մասին անդրադարձ կատարվել է բողոքում, մասնավորապես՝

- Արձանագրությունում նշված է, որ դիմումատուն ունի «հարկային պարտավորություններ», թեև նման տեղեկատվություն չի ներկայացրել ոչ Կոմիտեն, ոչ Դիմումատուն, քանի որ բոլոր հարկերը վճարված էին:

- Կոմիտեն ներկայացրել է «եզրակացություն», ոչ թե «տեղեկատվություն», որը իրականությանը չի համապատասխանում:

- Կոմիտեն չի ներկայացրել ամբողջական տեղեկատվություն՝ ընդգրկելով գերավճարները:

- Կոմիտեն տեղեկատվությունը չի ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին» հրամանի ձևաչափով, որով խախտել է նշված նորմատիվ իրավական ակտի պահանջը:

- Կոմիտեն Պատվիրատուին և Դիմումատուին ներկայացրել է իր կողմից հաստատված երկու իրարամերժ տեղեկատվություններ:

4. ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն բոլորը հավասար են օրենքի առջև: Այդ նպատակով Սահմանադրությունը 171-րդ հոդվածում ամրագրում է ՀՀ վճռաբեկ դատարանի օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը ապահովելու պարտավորությունը: Սա պատահական չէ, քանի որ նպատակ է հետապնդում բոլոր մասնակիցների համար ապահովել կանխատեսելի արդարադատություն: Օրենքի միատեսակ կիրառման համար կարևոր է նաև, որ որոշումները լինեն իրավական և համապատասխանեն Սահմանադրությամբ ամրագրված

իրավական որոշակիության և իրավական կանխատեսելիության սկզբունքին: Պետությունը իր հերթին ստանձնում է պոզիտիվ պարտավորություն ապահովելու օրենքի առջև բոլորի հավասարության և կանխատեսելի արդարադատության իրականացումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն որոշմամբ հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի» 18-րդ կետի դրույթների համաձայն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և կիրառել այն, իսկ իր կողմից բողոքի քննության ընթացքում կայացված որոշումները պետք է լինեն օրինական, հիմնավորված և պատճառաբանված:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին: Իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում սկզբունքի վրա:

Հետևաբար, Գնումների գործընթացում միևնույն իրավական ակտերի մեկնաբանությունները չեն կարող տարբեր բողոքներ քննող անձանց մոտ տարբեր լինել, քանի որ դա խախտում է արդարադատության կանխատեսելիության, իրավական որոշակիության Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքները: Օրենքի առջև բոլորը հավասար են և օրենքը բոլորի համար պետք է մեկնաբանվի և կիրառվի միանման: Իսկ հակառակը սահմանող բոլոր օրենքներն ու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը հակասում են Սահմանադրությանը և իրավական պետության գործունեության սկզբունքներին, ուստի հռչակվելու են հակասահմանադրական: Այդ նպատակով՝ կից ներկայացվում են նույնանման փաստական և իրավական հանգամանքներով միայն 2019թ. մի քանի գործ, որով գործի քննությունը կայացվել է հօգուտ Դիմումատուի՝ օրինակ՝ **11.02.2019թ.-ի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԲԱ-ԱՄ-2019/10 որոշումն է (http://www.tashircity.am /upload/DocFlow/Gnumner/Mo1932516024106753_GAK228.pdf), կամ 06.05.2019թ.-ի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2019/18 որոշումը, (<http://gnumner.am>**

[/website/images/original/voroshum_gbqa_18.PDF?fbclid=IwAR15dSVL6mdpqrPJ9rQJ8J42hUIO9q-MN6StxnQSiYWmSVesZrYh7xWNVvY\):](#)

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, հանգում ենք հետևյալ եզրահանգումների՝

1. Ոչ մի իրավական ակտում ուղղակիորեն չկա հղում այն մասին, որ «դրոշմանիշային վճարները» հանդիսանում են վերահսկվող եկամուտներ,

2. Հարկային օրենսդրության համաձայն «վճարը» կարող է սահմանվել միայն օրենսգրքով, ինչի մասին ուղղակիորեն թվարկվում է նույն օրենսգրքում,

3. Տարբեր օրենքներում տրված են միմյանց հակասող, տարբեր կարգավորումներ, հետևաբար, եթե հարկային հարաբերությունները կարգավորող՝ հավասար իրավական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ, ապա դրանք մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին,

4. Արտատպված անձնական հաշվի քաղվածքում նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն,

5. Հարկային մարմնի աշխատակիցների՝ կայքում կատարված գրառումները չեն կարող համարվել օրենք կամ օրենքի փոփոխություն կամ ենթաօրենսդրական ակտ, հետևաբար և ընդունելի ապացույց,

6. «Հարկային եկամուտների» և «վերահսկվող եկամուտների» հասկացությունները նույնական չեն,

7. «Հարկային եկամուտները» չեն կարող նույնացվել հարկերի հետ,

8. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեի եկամուտները պետք է տնօրինվեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, իսկ ելքերը պետք է ուղղված լինեն պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների իրականացմանը, որոնց նկատմամբ հսկողությունն իրականացնում է կառավարությունը: Այս պայմաններից և ոչ մեկին չեն համապատասխանում «դրոշմանիշային վճարները»,

9. Հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017 թիվ 526-Ն ՀՀ Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները՝

➤ արձանագրելով, որ հարկային մարմինը տրամադրել է «եզրակացություն» ոչ թե «տեղեկատվություն»,

➤ Կոմիտեից պահանջելով տեղեկատվություն «պարտավորությունների» այլ ոչ թե «վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների» վերաբերյալ:

➤ Իր հերթին Կոմիտեն ևս խախտել է նույն դրույթը՝ տրամադրելով նման տեղեկատվություն, քանի որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

10. Օրենքի առջև բոլորը հավասար են և օրենքներն ու մնացած իրավական ակտերը բոլորի համար պետք է մեկնաբանվեն և կիրառվեն միանման:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի, ինչպես նաև «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի» 15-րդ կետի դրույթները՝

Ընկերությունը բողոքով խնդրել է.

1. Անվավեր ճանաչել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ.-ի N4 արձանագրության 1.2 ենթակետը, 2 և 3 կետերը ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար՝ հիմք ընդունելով Դիմումատուի 6,625,899 /վեց միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ սահմանված չափից ավել վճարած գումարներ, ինչպես նաև 1,365,801 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսուհինգ հազար ութ հարյուր մեկ/ ՀՀ դրամ դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով սահմանված չափից ավել վճարած գումարների առկայությունը:

3. Պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ Կոմիտեից պահանջելու միայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. Ապրիլի 11-ի թիվ 245 - Ա հրամանի հիման վրա տրված հարկ վճարողի՝ «Կամրջային

երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի անձնական հաշվի քարտի քաղվածքով սահմանված տեղեկատվություն՝ առանց դրոշմանիշային վճարների:

Միևնույն ժամանակ Ընկերության կողմից 31.05.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հասցեագրված գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերության կողմից 02.05.2019թ. կատարվել է դրոշմանիշային վճարի գծով պարտավորության ամբողջական մարում՝ հարկային մարմնի կողմից պարտավորության մասին շանուցման անմիջապես հաջորդ օրը և կցել է վճարման անդորրագրի պատճենը:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.05.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին սահմանված կարգով ներկայացրել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով բաց մրցույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.05.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արձանագրվել է ժամկետանց պարտավորություն, ուստի Ընկերության հայտը մերժվել է:

3. ԳԲԲԱ-ՆԳ-2019/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԲԱ-ՆԳ-2019/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, որին մասնակցելու նպատակով 18.04.2019թ. հայտ է ներկայացրել «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնիների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 30.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 307 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, գործում եղած յուրաքանչյուր ապացույց գնահատելով դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակացության մեջ բավարարության տեսանկյունից, ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման հիման վրա գտնում եմ, որ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Տվյալ դեպքում բողոքաբերը խնդրել է անվավեր ճանաչել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ.-ի N4 արձանագրության 1.2 ենթակետը, 2 և 3 կետերը ամբողջությամբ,

պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար՝ հիմք ընդունելով Դիմումատուի 6 625 899 /վեց միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ սահմանված չափից ավել վճարած գումարներ, ինչպես նաև 1 365 801 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր մեկ/ ՀՀ դրամ դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով սահմանված չափից ավել վճարած գումարների առկայությունը, ինչպես նաև պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ Կոմիտեից պահանջելու միայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. Ապրիլի 11-ի թիվ 245- Ա հրամանի հիման վրա տրված հարկ վճարողի՝ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի անձնական հաշվի քարտի քաղվածքով սահմանված տեղեկատվություն՝ առանց դրոշմանիշային վճարների՝ որպես փաստական հիմք վկայակոչելով այն հանգամանքը, որ դրոշմանիշային վճարները չեն հանդիսանում վերահսկվող եկամուտներ:

Հիմք ընդունելով բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը, գտնում եմ, որ բողոքի քննության շրջանակներում պետք է գնահատման առարկա դարձվի այն հարցադրումը թե արդյոք դրոշմանիշային վճարները հանդիսանում են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ թե՛ ոչ: Այսպես.

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով նույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական քույզե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, նույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին

չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին): Մինչև գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը պարտավոր անձի գույքի վրա հարկային մարմինը կարող է դնել արգելանք կամ կիրառել սահմանափակում՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

Միաժամանակ, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 10-րդ պարբերության համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, փուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

Այսպիսով հիմք ընդունելով վերոգրյալ իրավական նորմերը և դրանց վերաբերյալ կատարված վերլուծությունները, արձանագրում եմ, որ դրոշմանիշային վճարները հանդիսանում են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ:

Բողոքի առարկա հանդիսացող Ընթացակարգի մասով հայտնում եմ հետևյալը.

Պատվիրատուի կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար հայտարարված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 18.04.2019թ. մասնակցության հայտ ներկայացրած «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնիների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 30.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ **Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 307 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: **Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:** Սույն կետով նախատեսված

որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած ***հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ փվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:***

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Ընկերության կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է իրականությանը չհամապատասխանող, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Նման դեպքերում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ և առաջնորդվելով Օրենքով և Կարգով սահմանված պահանջներով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված կարգով տրամադրված եզրակացությունը՝ Ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքում նշված այն պնդմանը, որ 18.04.2019թ. դրությամբ Ընկերության անձնական հաշվի քարտի քաղվածքի համաձայն՝ (քաղվածքի պատճենը ներկայացրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին) միասնական հաշվում առկա են եղել 6 625 899 ՀՀ դրամ սահմանված չափից ավել վճարած գումարներ, ինչպես նաև 1 365 801 ՀՀ դրամ դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով ու արտացոլված չեն եղել դրոշմանիշային գծով պարտավորություններ, և դա պատահական չէ, քանի որ դրոշմանիշային վճարները չեն հանդիսանում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ, ապա սույն մասով հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված այն պնդմանը, որ դրոշմանիշային վճարները Ընկերության հարկ վճարողի մեկ միասնական անձնական հաշվի մեջ չեն ներառվում, որովհետև ոչ հարկ են, ոչ տուրք, ոչ էլ այլ վճար, իսկ Ընկերության մոտ առկա 307 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը պետք է հաշվանցվեր Ընկերության հաշվում առկա գումարից, ապա հայտնում եմ, որ Ընկերության կողմից բարձրացված հարցի կարգավորման նպատակով

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն բողոքի շրջանակներում դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին, որին ի պատասխան վերջինս գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/2Շ ծածկագրով ստացված հարցմանն ի պատասխան 07.05.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրվել է տեղեկատվություն արձանագրված «ԿԱՄՐՋԱՅԻՆ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԵ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ն /ՀՎՀՀ՝ 01800813/ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 307 000 ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ դրոշմանիշային վճարի գծով»:

Միաժամանակ հայտնել է, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն ***դրոշմանիշային վճարը*** վճարվում է պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշվեհամարին, որը ***ՀՀ հարկային օրենսգրքի միասնական հաշվի դրույթներում ներառված չէ, ուստի միասնական հաշվում առկա ավել գումարից հնքնաշխատ հաշվանցում հնարավոր չէ իրականացնել***»:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկներին, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հրապարակային որոշումներում «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) կետին հղում կատարելը տեղին չէ, ապա այս առումով հարկ եմ համարում նշել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուժի մեջ մտած որոշումն իրավապարտադիր է, իսկ որոշման հետ համաձայն չլինելու դեպքում այն կարող է սահմանված կարգով բողոքարկել դատական կարգով:

Միաժամանակ անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկներին, որ այլ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձիք բողոքում բարձրացված միևնույն փաստական և իրավական հիմքերով որոշում են կայացրել հոգուտ բողոքաբերի, ապա այս առումով հարկ եմ համարում նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և

անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն: Այսինքն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձանցից յուրաքանչյուրը Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հանդես է գալիս որպես անկախ քննություն իրականացնող մարմին և անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և չի կարող կաշկանդված լինել Գնումների հետ կապված բողոքներ քննող մյուս անձի դիրքորոշումներով (որոշումներով), այլապես խոսք չի կարող լինել անկախ քննություն իրականացնող մարմնի մասին:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ